ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

N «ՍՄ-ԲԸՀԾՁԲ-2017/1ՏՀ»

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Հալիձոր, Բաղաբերդ և Ձորք թաղամասերի ասֆալտապատման և բարեկարգման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության

ք. Կապան «12» «հունիս» 2017թ.

ՀՀ Սյունիքի մարզպետարանը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ. Սարգսյանի, ով գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից, և «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Գ. Արշակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 2017թ ապրիլի 19-ին կնքված N «ՍՄ-ԲԸՀԾՁԲ-2017/1ՏՀ» գնման պայմանագիրը, /այսուհետև՝ Պայմանագիր/, կնքեցին սույն համաձայնագիրը /այսուհետև Համաձայնագիր/ հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կատարողն պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով Պատվիրատուի կամ նրա կողմից որոշված Ստացողի հանձնարարությամբ, կատարել Պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով և սույն **Համաձայնագրի**ն կցվող ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Հալիձոր, Բաղաբերդ և Ձորք թաղամասերի ասֆալտապատման և բարեկարգման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության (այսուհետև՝ Աշխատանք), համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2017 թվականի ապրիլի 19-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2017 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ հանդիսանալով Պայմանագրի անբաժանելի մասը:

2 Աշխատանքի կատարման պայմանները

2.1 Աշխատանքի արդյունքը հանձնվում է Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին:

3,Համաձայնագրի գինը և վճարման կարգը

3.1 Սույն **Համաձայնագրով Կատարողի** կողմից կատարվելիք **Աշխատանքների** ընդհանուր գինը կազմում է 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ը: Աշխատանքի գինը ներկայացված է սույն համաձայնագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածում: Գինը ներառում է **Կատարողի** կողմից իրականացվող բոլոր հարկերը և պարտադիր այլ վճարները:

3,2 **Պատվիրատուն** իր համաձայնությամբ կատարված **Աշխատանքի** դիմաց վճարում է **Պայմանագրով** նախատեսված **Կարգով,** սույն համաձայնագրի N 2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

4.Այլ պայմաններ

4,1 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի **Պայմանագրով** նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում **Աշխատանքների** հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

4.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

4.3 Սույն համաձայնագիրը կազմվում է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N1, N2 հավելվածները կազմված են 2 էջից և հանդիսանում են համաձայնագրի անբաժանելի մաս, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ ք. Կապան, Գ. Նժդեհ 1 Կապանի ՏԳՓ հ/հ 90031100065[illegible] ՀՎՀՀ 09[illegible] Ռ.Սարգսյան (ստորագրություն) Կ.Տ	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ ք. Երևան, Հալաբյան 41ա «Արդշինբանկ» ՓԲԸ «Նաիրի» մ/ճ հ/հ 2478700277210010 ՀՎՀՀ 01508665 Գ.Արշակյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված 1
19 ապրիլի 2017թ. կնքված
ՍՄ-ԲԸՀԾՁԲ-2017/1ՏՀ պայմանագրի

Գ Ն Մ Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց
(ՀՀ Սյունիքի մարզպետարան)

/ հազ. դրամ /

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Գնումը 2017թ.ընթացքում				Ընդամենը 2017թ.
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
1	2	3	4	5	6	7
1	ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Հալիձոր, Բաղաբերդ և Ձորք թաղամասերի ասֆալտապատման և բարեկարգման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն	-	300.00	300.00	300.00	300.00

Պատվիրատու

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմ
ք. Կապան, Գ. Նժդեհ 1
Կապանի ՏԳԲ
Հ/Հ 900311000658
ՀՎՀՀ 09415375

Գ.Սարգսյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կատարող

«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական
փորձաքննություն» ՓԲԸ
ք. Երևան, Հալաբյան 41ա
<<Արդշինբանկ>> ՓԲԸ «Նաիրի» մ/ճ
Հ/Հ 2473700277210010
ՀՎՀՀ 01508665

Գ.Արշակյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 2
19 ապրիլի 2017թ. կնքված
ՍՄ-ԲԸՀԾՁԲ-2017/1ՏՀ պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(ՀՀ Սյունիքի մարզպետարան)

/հազ. դրամ/

Աշխատանքի անվանումը	Ֆինանսավորման գումարը՝ ՀՀ պետական բյուջե 2017թ. ընթացքում ըստ ամիսների												Ընդամենը
	Հունվար	փետրվար	Մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Հալիձոր, Բաղաբերդ և Ձորք թաղամասերի ասֆալտապատման և բարեկարգման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն	-	-	-	-	-	300.00	300.00	300.00	300.00	300.00	300.00	300.00	300.00

Ծանոթություն. Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

Պատվիրատու

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմ
ք. Կապան, Գ. Նժդեհ 1
Կապանի ՏԳԲ
Հ/Հ 900311000658
ՀՎՀՀ 09415375

Ռ.Սարգսյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կատարող

«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական
փորձաքննություն» ՓԲԸ
ք. Երևան, Հալաբյան 41ա
<<Արդշինբանկ>> ՓԲԸ «Նաիրի» մ/ճ
Հ/Հ 2473700277210010
ՀՎՀՀ 01508665

Հ.Սրբազյան
(ստորագրություն)

Կ.Տ.